Գործարարություն հանուն կենսաբազմազանության

Կենսաբազմազանության պահպանություն ձեռնարկատիրության միջոցով

Հավաքույն փորձի օրինակներ

NABU

Գործարարություն հանուն կենսաբազմազանության

Կենսաբազմազանության պահպանություն ձեռնարկատիրության միջոցով

Տեքստը՝ Դոմինիկ Սոպարտի
Խմբագիր՝ Վիտալի Կովալյով
Թարգմանիչ՝ Աննա Հակոբջանյան
Սրբագրիչ՝
Լուսանկարները՝

Ձեռնարկը պատրաստված է Գերմանիայի Դաշնության շրջակա միջավայրի, բնության պահպանության և միջուկային ռեակտորների անվտանգության նախարարության կողմից «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, կովկասյան ու միջինասիական երկրների խորհրդատվական աջակցություն» ծրագրի միջոցների հաշվին ֆինանսավորվող «Համագործակցության նոր ձևեր Կովկասում հանուն կենսաբազմազանության պաշտպանության. համագործակցության խրախուսում Հայաստանի Հանրապետության մասնավոր ձեռնարկությունների և բնապահպանական հասարակական կազմակերպությունների միջև» ծրագրի շրջանակներում:

Հրատարակված է՝
Տպաքանակը՝ 200 օրինակ

Բեռլին/ Երևան
2013

Բովանդակություն

Նախաբան 1

1. Գործարարություն և կենսաբազմազանություն 5

2. Լավագույն փորձ. Օրինակներ ըստ գործունեության դաշտերի 9

2.1 «Սպառողների և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ» 9

2.2 “Մատակարարման շղթա, հումք և նյութեր” 17

2.3 “Ապրանքներ” 19

2.4 “Արտադրության և վերամշակման գործընթաց” 24

2.5 “Տրանսպորտ և լոգիստիկա” 27

2.6 “Անձնակազմ” 27

2.7 “Գտնվելու վայր և անշարժ գույք” 29

Նախաբան

Կենսունակ էկոհամակարգերը և կենսաբազմազանությունը մարդկության գոյության կարևորագույն նախապայմաններից են, որոնք ընձեռում են հասարակության զարգացման և տնտեսական աճի լայն հնարավորություններ: Եվրոպան Ասիայից բաժանող սահմանագծի վրա տեղակայված Հայաստանն աչքի է ընկնում ինչպես համաշխարհային նշանակություն ունեցող քաղաքակրթական և մշակութային ժառանգությամբ, այնպես էլ բացառիկ հարուստ բնությամբ: Կովկասյան տարածաշրջանը, որի մաս է կազմում նաև Հայաստանը, համարվում է աշխարհի կենսաբազմազանության 34 թեժակետերից մեկը, որոնք կենսամիջավայրերի և կենսաբանական տեսակների իրենց հարստությամբ համաշխարհային կարևոր նշանակություն ունեն: Տարբեր կլիմայական գոտիների և ռելիեֆների առկայությամբ պայմանավորված՝ Հայաստանն աչքի է ընկնում էկոհամակարգերի աննախադեպ բազմազանությամբ: Այստեղ կարելի է հանդիպել այնպիսի էկոհամակարգեր, ինչպիսիք են կիսաանապատները, չոր ու լեռնային տափաստանները, փշատերև ու սաղարթավոր անտառները, ենթալպյան և ալպյան մարգագետինները, ինչպես նաև մեծաթիվ գետեր, լճեր, սառցադաշտեր: Շնորհիվ բնական միջավայրի այսպիսի տպավորիչ բազմազանության՝ Հայաստանի փոքր տարածքում հանդիպում են շուրջ 3.600 սպորոֆիտական (անոթային) բույսերի, 4.700 սնկերի, ինչպես նաև 17.000 անողնաշար ու 540 ողնաշարավոր կենդանիների տեսակներ: Դրանցից որոշները գտնվում են ոչնչացման եզրին, այդ թվում՝ կովկասյան ընձառյուծը, լուսանը, մանուլը, գերեզմանարծիվը կամ ժանտաքիսը: Հայաստանը հարուստ է նաև բույսերի ու կենդանիների էնդեմիկ (տեղական) տեսակներով, օրինակ՝ հայկական մուֆլոնը, որոնց պաշտպանությունն առանձնահատուկ կարևորություն ունի տեսակների համաշխարհային ժառանգության պահպանության առումով: Հարկ է նշել նաև, որ Հայաստանը համարվում է մշակաբույսերի ծագման աշխարհի հինգ կենտրոններից մեկը: Նույնիսկ մեր օրերում այստեղ կարելի է գտնել ցորենի, ծիրանի, խնձորի, ինչպես նաև ընկուզազգիների վայրի տեսակների մեծ բազմազանություն: Հաշվի առնելով Հայաստանում հանքային և օրգանական հանածոների պաշարների սակավությունը՝ երկրի բիոլոգիական հարստության, այդ թվում՝ կենդանիների ու բույսերի տեսակների, էկոհամակարգերի և գենետիկական ռեսուրսների պահպանությունն ավելի է կարևորվում տնտեսության զարգացման համար:

Կենսաբանական բազմազանության կրճատումը խոշոր հիմնախնդիր է, որով մտահոգված է ամբողջ աշխարհը: Այն կասեցնելու համար, պետական կառույցների և քաղաքացիական հասարակության հետ միասին, մասնավոր ոլորտը ևս պետք է պատասխանատվություն ստանձնի և իր նեդրումն ունենա կենսաբանական և էկոհամակարգերի բազմազանության պահպանության

գործում: Ընկերությունները, իրենց տնտեսական գործունեությունն իրականացնելիս՝ ապրանքներ արտադրելիս կամ ծառայություններ մատուցելիս, օգտվում են բնական ռեսուրսներից և, հետևաբար, կայուն կառավարման ռազմավարության բացակայության դեպքում, բացասական ազդեցություն են ունենում բնության և շրջակա միջավայրի վրա: PricewaterhouseCoopers (PwC) կազմակերպության 2010թ-ի հետազոտության արդյունքների համաձայն՝ էկոհամակարգերի և կենսաբազմազանության կորստի պատճառով առաջացած տարեկան վնասը կազմում է 2-4,5 միլիարդ ԱՄՆ դոլար: Բնական ռեսուրսներից անմիջականորեն օգտվող տնտեսության ճյուղերը, որոնց թվում են անտառատնտեսությունը, գյուղատնտեսությունը, ձկնաբուծությունը, սննդի արդյունաբերությունը, տուրիզմը և այլն, մեծապես կախված են կենսաբանական տեսակներով հարուստ էկոհամակարգերի կենսունակությունից ու կայունությունից: Կենսաբանական բազմազանության առկայությունը ուղղակիորեն ազդում է նաև առողջապահության վրա: Հաշվի առնելով կենսաբազմազանության դեղամիջոցների, մշակաբույսերի նոր տեսակների զարգացման համար անհրաժեշտ գեների, բիոտեխնոլոգիական գործընթացների կամ բիոտեխնիկական զարգացումների հսկայական ներուժը՝ կարելի է հասկանալ, որ դրա պահպանությունը կարևոր խթան կհանդիսանա ՀՀ-ում այդ ճյուղերի զարգացման համար:

Զարգացած շատ երկրներում, օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում (ԱՄՆ), Եվրոմիությունում (ԵՄ), Ճապոնիայում, մասնավոր ընկերություններն արդեն կարևոր դեր են ստանձնել շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պաշտպանության հարցում: Պետական կառույցներին և բնապահպանական հասարակական կազմակերպություններին կից՝ մասնավոր ընկերությունները ևս պատասխանատվություն են կրում այդ համընդհանուր հիմնախնդրի լուծման համար: Այս ամենի հիմքում ընկած է Եվրոհանձնաժողովի կողմից 2006թ-ին ընդունած կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ընդլայնման մասին որոշումը: ԿՍՊ-ը հայեցակարգ է, որի համաձայն ընկերությունները ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ ձևավորելիս, կամավորության սկզբունքով պետք է հաշվի առնեն սոցիալական և շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող հիմնախնդիրները:

Ելնելով այդ հայեցակարգից՝ «Գերմանիայի բնության պահպանության միություն» (NABU) կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հետ միասին ցանկանում է Հայաստանի կենսաբազմազանության պահպանության համար ևս ձեռք բերել մասնավոր ընկերությունների աջակցությունը: Ավելի քան 10 տարի NABU-ն համագործակցում է ՀՀ բնապահպանական պետական կառույցների և ոչ

պետական կազմակերպությունների հետ: 2007թ-ի մարտին ՀՀ բնապահպանության նախարարության հետ համագործակցության պայմանագրի ստորագրումից հետո, NABU-ն ցուցաբերում է ինստիտուցիոնալ և մասնագիտական աջակցություն ՀՀ բնապահպանական ծրագրերին: Այնուամենայնիվ, միայն պետական կառույցների ու ոչ պետական կազմակերպությունների ունեցած հնարավորությունները բավարար չեն այդ ոլորտում բարձր մասնագիտական աշխատանքների իրականացման և անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման համար: Հետևաբար, ոլորտում մասնավոր ընկերությունների ներգրավումը, արդեն գործող բնապահպանական կազմակերպությունների հետ նրանց համագործակցությունը մեծապես կնպաստի բնապահպանական ոլորտի գործունեության ընդլայնմանն ու զարգացմանը, ինչպես նաև մինչ այժմ ունեցած ձեռքբերումների առավել կատարելագործմանն ու ամրապնդմանը:

NABU-ի մասնագիտացվածությունն այս ոլորտում գերմանական և արտասահմանյան մի շարք երկրների մասնավոր ընկերությունների հետ երկարամյա արդյունավետ համագործակցության արդյունք է: Ներկայումս տեսակների, կենսամիջավայրերի, կլիմայի ու ռեսուրսների պահպանության բնագավառում NABU-ն համագործակցում է շուրջ 26 մասնավոր ընկերությունների հետ: Համագործակցությունն իրականացվում է տարբեր եղանակներով, այդ թվում՝ ա) բնության կամ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված առանձին միջոցառումների հովանավորում ֆինանսական կամ նյութական այլ միջոցներով, բ) արտոնագրերի հանձնում ձեռնարկատիրական որոշակի գործունեության կամ ապրանքների արտադրության համար, գ) ռազմավարական համագործակցություն՝ ընկերություններում կայուն կառավարման սկզբունքների ներդրման ուղղությամբ: «NABU – ձեռնարկատիրական նախաձեռնություն»-ը, որը հիմնադրվել է 2007թ.-ին, կարևոր հարթակ է փոքր և միջին ձեռնարկությունների ինտեգրման և միջճյուղային փորձի փոխանակման համար: Նախաձեռնության հիմնադրումից ի վեր՝ ութ անդամ ընկերություններ NABU-ի հետ միասին ուսուցողական սեմինարների միջոցով պայքարում են՝ հասնելու տնտեսական, սոցիալական և էկոլոգիական նպատակների հավասարակշռմանը, այլ կերպ՝ ընկերություններում կայուն կառավարման սկզբունքների ներդրմանը:

Ինչպես նշվեց, NABU-ն մասնավոր ձեռնարկությունների հետ համագործակցում է նաև Գերմանիայի տարածքից դուրս: 2011թ.-ի սեպտեմբերին Սոչիում կայացած միջազգային տնտեսական ֆորումի ժամանակ, NABU-ի Միջազգային բնապահպանության հիմնադրամի օժանդակությամբ, հիմնադրվեց «Հարավային Ռուսաստան» ձեռնարկատերերի նախաձեռնությունը Ռուսաստանի Դաշնության տարածքում NABU-ի կողմից իրականացվող բնապահպանական ծրագրերին աջակցություն ցուցաբերելու նպատակով:

NABU-ի և մասնավոր ընկերությունների միջև համագործակցության արդյունավետ զարգացումը և զգալի ձեռքբերումները հիմք հանդիսացան նմանատիպ համագործակցություն փնտրել նաև հայկական ընկերությունների հետ: Հարկ է նշել, որ ներկայումս հայկական շատ ընկերություններ իրենց ներդրումն արդեն ունեն հասարակական տարբեր ոլորտների զարգացման գործում, որը, սակայն, սահմանափակվում է միայն բարեգործությամբ, որտեղ որպես միակ գործիք օգտագործվում է նվիրատվությունը: Տվյալ դեպքում չեն կիրառվում ընկերությունների հետ համագործակցության ժամանակակից ձևերի ընձեռած լայն հնարավորությունները: Բնությունն ու շրջակա միջավայրը ձեռնարկատիրական գործունեության օգնությամբ պահպանելու համար տեղի բնակչությունն օժտված է անհրաժեշտ բոլոր կարևոր գծերով: Հայ ժողովուրդին՝ ներառյալ ձեռնարկատերերին, բնորոշ են հավասարության, համերաշխության և առատաձեռնության բարձրարժեք հատկանիշներ, վերջինիս ապացույցը նվիրատվության մեջ նրանց առատաձեռնությունն է:

ՀՀ բնապահպանական նախարարությունը, ընդունելով «NABU-ձեռնարկատիրական նախաձեռնության» համագործակցության առաջարկը, պատրաստակամություն է հայտնել աջակցել Հայաստանում այդօրինակ համագործակցության ձևավորմանը: Այդ նպատակով 2013թ-ի մայիսից NABU-ն սկսել է «Համագործակցության նոր ձևեր Կովկասում հանուն կենսաբազմազանության պաշտպանության. համագործակցության խրախուսում Հայաստանի Հանրապետության մասնավոր ձեռնարկությունների և բնապահպանական հասարակական կազմակերպությունների միջև» ծրագրի իրականացումը, որը ֆինանսավորվում է Գերմանիայի Դաշնության շրջակա միջավայրի պաշտպանության նախարարությանը կից իրականացվող «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, կովկասյան ու միջինասիական երկրներին խորհրդատվական աջակցություն» ծրագրի միջոցներով: Ծրագրի նպատակն է սկիզբ դնել մասնավոր ընկերությունների, բնապահպանական ՀԿ-ների ու բնապահպանական պետական կառույցների միջև համագործակցությանը՝ հիմք ընդունելով «Կորպորատիվ սոցիալական կառավարում» հայեցակարգն ու «Էկոհամակարգերի և կենսաբազմազանության տնտեսագիտություն» եվրոպական հետազոտությունը: Այդ նպատակով մի կողմից պետք է վերապատրաստել կենսաբազմազանության ոլորտում աշխատող մասնագետներին՝ խթանելով նրանց նախաձեռնողականությունը, մյուս կողմից՝ հասարակության լայն շերտերի համար լուսաբանել այն մոտեցումը, որ կենսաբազմազանության պաշտպանությունը ոչ մի կերպ չի խոչընդոտում տնտեսության զարգացմանը: Ծրագրի նպատակին հասնելու համար ծրագրի գործընկերներն պլանավորում են իրականացնել վերապատրաստական սեմինարներ, կազմակերպել

«գաղափարների մրցույթ», իրականացնել փոքր մոդել-ծրագրեր և ստեղծել ծրագրի վերաբերյալ կայք համացանցում:

Սույն «Լավագույն փորձի ձեռնարկ»-ը ևս հանդիսանում է ծրագրի մի բաղադրիչը: Այն կարճ նկարագրում է «Գործարարություն և կենսաբազմազանություն» թեմայի կարևորությունն ու ներկայացնում այդ ոլորտում մեծ ձեռքբերումներ ունեցած 30 ընկերությունների օրինակներ:

1. Գործարարություն և կենսաբազմազանություն

Կենսաբազմազանության պաշտպանության հրատապությունն ընդգծելու նպատակով 1993թ.-ին ՄԱԿ-ն ընդունել է Կենսաբանական բազմազանության կոնվեցիա (*Convention on Biological Diversity – CBD*), որը ստորագրվել է աշխարհի 168 երկրների՝ այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության կողմից: Կոնվենցիայի անդամ երկրները պարտավորվում են էկոհամակարգերի բաղադրիչներն օգտագործել կայուն կերպով, պաշտպանել կենսաբանական բազմազանությունը, կանոնակարգել գենետիկական ռեսուրսների օգտագործման իրավունքը՝ արդարացիորեն փոխհատուցելով դրանցից ստացված օգուտները:

Մինչ այժմ, սակայն, Կոնվենցիայի նպատակների իրականացման պատասխանատվությունն ընկած էր միայն պետական կառույցների ու բնապահպանական կազմակերպությունների վրա: Մինչև վերջերս կենսաբազմազանության համակարգված կառավարում իրականացնում են միայն մի խումբ ընկերություններ, մինչդեռ կենսաբանական բազմազանությունն արդյունաբերական շատ ճյուղերի հաջող տնտեսվարման հիմնաքարն է: Կենսաբազմազանության համակարգված կառավարումը նպաստում է կենսաբանական բազմազանության պաշտպանությանը, որը իր հերթին հանգեցնում է ձեռնարկատիրական ռիսկերի նվազեցմանը ու ընձեռնված հնարավորությունների օգտագործմանը:

Կենսաբազմազանության պաշտպանությունը գործարարների կողմից հաճախ սկսվում է բարեգործությամբ բնապահպանական ծրագրերին նվիրատվություններ կատարելու կամ բնապահպանական հիմնադրամներ ստեղծելու միջոցով: Բարեգործական նպատակներով կատարված կամ ընկերության տնտեսական արդյունավետության բարձրացմանն ուղղված այս քայլերը, որոնց նպատակը սպառողների հետ դրական հարաբերությունների ձևավորումն ու ամրապնդումն է, հանգեցնում են ՀԿ-ների կողմից ներկայացվող հասարակական խմբերի հետ արդյունավետ համագործակցության:

Այսպիսի գործողությունները լիովին ողջունելի են հասարակության կողմից, քանի որ ցույց են տալիս, որ գործարարները, բացի իրենց բուն տնտեսական գործունեությունից, հետաքրքրված են նաև հասարակական այլ ոլորտների խնդիրների լուծմամբ: Այդ գործողությունների շարունակական իրականացումը ընկերության տնտեսական հաջողության երաշխիք է: **Եթե հաջողվում է ձեռնարկատիրական որոշակի գործունեության արդյունքում հասնել տնտեսական արդյունավետության բարձրացման՝ միևնույն ժամանակ խթանելով կենսաբազմազանության պաշտպանությունը, ապա գործ ունենք "Business Case for Biodiversity" *(գործարարություն հանուն կենսաբազմազանության)* հետ:**

Ժամանակի ընթացքում «Գործարարություն հանուն կենսաբազմազանություն»-ը դառնում է ընկերության անբաժանելի մաս՝ նպաստելով նրա տնտեսական արդյունավետության բարձրացմանն ու երկարաժամկետ կայունության ապահովմանը: Այսպիսով, «Գործարարություն հանուն կենսաբազմազանության» նպատակը հետևյալն է՝ կամավորության սկզբունքով անկախ օրենքների պահանջներից իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք կնպաստեն կենսաբազմազանության պաշտպանությանը՝ միևնույն ժամանակ բարձրացնելով ընկերության տնտեսական արդյունավետությունը: Այդ նպատակին կարելի է հասնել կենսաբազմազանության կայուն կառավարման շրջանակներում մշակված, կենսաբազմազանության պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացման միջոցով:

Կենսաբազմազանության ձեռնարկատիրական կառավարումն իրենից ներկայացնում է գործընթացների ու ծրագրերի այնպիսի համակարգված ամբողջություն, որն ուղղված է ընկերության տնտեսական արդյունավետության ապահովմանը՝ միևնույն ժամանակ նպաստելով կենսաբազմազանության պաշտպանությանը: Այն պարբերաբար վերլուծում է ձեռնարկատիրական գործունեության ազդեցությունը կենսաբազմազանության վրա, երկրի օրենսդրական դաշտն ու հասարակական-քաղաքական իրավիճակը: Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունները՝ իրականացվում են միջոցառումներ՝ ուղղված ընկերությունների կայուն զարգացմանը: Ինչպես ներկայացված է հաջորդիվ բերված գծապատկերում, այդ միջոցառումներն իրականացվում են ընկերության ֆուկցիոնալ՝ հումքի ձեռքբերման, արտադրության կամ մարքեթինգի օղակների միջոցով: Այդ օղակները ձեռնարկության գործունեության դաշտերից մեկում կամ մի քանիսում իրականացնում են կենսաբազմազանության պահպանությանն ուղղված տարբեր միջոցառումներ: Գործողունեության այդ դաշտերն են՝ ընկերության գտնվելու վայր և անշարժ գույք, մատակարարման շղթա, անձնակազմի հետ աշխատանքներ և այլն (տես՝ Գծապատկեր), որոնք հանդիսանում են կենսաբազմազանության ձեռնարկատիրական կառավարման անմիջական ազդեցության օբյեկտները: Կլիմայի փոփոխությունը, կենսամիջավայրերի փոփոխումը, տեղանքին ոչ բնորոշ տեսակների առկայությունը, էկոհամակարգերի բաղադրիչների օգտագործման չարաշահումը, ինչպես նաև արտանետումները կենսաբազմազանության վրա ազդող հիմնական պատճառներն են: Միևնույն ժամանակ, ընկերության գործունեության դաշտերն ազդում են մի շարք տնտեսական փոփոխականների վրա, որոնք հայտնի են նաև «Գործարարություն հանուն կենսաբազմազանության» **խթանիչ ուժեր** անվանմամբ: Դրանք են՝ արտադրական ծախսեր, հասույթ, ապրանքի գին, ռիսկերի նվազեցում, հեղինակություն և ապրանքանիշ, նորամուծություններ և գործարար մոդելներ: Կախված ձեռնարկատիրական գործունեության ժամանակ իրականացվող

միջոցառումների բնույթից՝ այդ խթանիչ ուժերը կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ «Գործարարություն հանուն կենսաբազմազանության» վրա:

«Գործարարություն հանուն կենսաբազմազանություն»-ը նպատակաուղղված կառավարման գործընթացի արդյունք է, և հնարավոր չէ դրան հասնել առանց լուրջ մասնագիտական միջամտության: Այդ գործընթացում էական նշանակություն ունի կենսաբազմազանության կառավարման կազմակերպումը: Անհրաժեշտ է պարբերաբար վերլուծել տնտեսական գործունեության վրա ազդող փոփոխականները և փնտրել կենսաբազմազանության պաշտպանությունն արդյունավետ տնտեսական գործունեության հետ համատեղելու ուղիներ: Այնուհանդերձ, տարբեր մեծության և տարբեր ճյուղերի շատ ընկերություններ կարողացել են ապացուցել, որ «Գործարարություն հանուն կենսաբազմազանության»-ը միայն ցանկալի երևակայական տեսություն չէ: Աշխարհի տարբեր հատվածներում, տնտեսական կառավարման տարբեր տիպի համակարգերում գործող շատ ընկերություններ իրենց փորձով ապացուցել են գործարարության և կենսաբազմազանության պահպանման համատեղելիության հնարավորությունը:

Սույն ձեռնարկում ներկայացված է «Գործարարություն հանուն կենսաբազմազանության» լավագույն փորձի 30 օրինակ: Այդ օրինակներն ընտրելիս հաշվի են առնվել կենսաբազմազանության կառավարման գործունեության դաշտերը: Սրա նպատակն է ցույց տալ կենսաբազմազանության ձեռնարկատիրական կառավարման ներդրման հնարավորությունների բազմազանությունը: Կենսաբազմազանության կառավարումը բարդ ու ամբողջական գործընթաց է, հետևաբար, նրա հաջող իրականացման համար, համապատասխան միջոցառումների իրականացումը չպետք է սահմանափակվի գործունեության միայն մեկ դաշտով: Այն ընկերությունները, որոնք նպատակ ունեն կենսաբազմազանության պաշտպանությունը դարձնել իրենց ձեռնարկատիրական գործունեության փիլիսոփայության մաս, պետք է կենսաբազմազանության պաշտպանությանն ուղղված միջոցառումներ իրականացնեն գործունեության մի քանի դաշտերում միաժամանակ: Սույն ձեռնարկում, հաշվի առնելով նախատեսված շրջանակների սահմանափակությունը, ներկայացվել են թվարկվող ընկերությունների գործունեության միայն մեկ դաշտում կատարված միջոցառումների լավագույն փորձի օրինակները: Ինչևէ, ձեռնարկը նպատակ է հետապնդում խրախուսել տեղի գործարարներին և կենսաբազմազանության կառավարման ոլորտի աշխատակիցներին: Հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման առանձնահատկությունները՝ գործարարները կարող են իրականացնել «Գործարարություն հանուն կենսաբազմազանություն» Հայաստանում՝ պարզապես ընդօրինակելով, երկրի առանձնահատուկ

պայմանների հետ համաձայնեցնելով կամ առավել զարգացնելով ներկայացված լավագույն փորձի օրինակները: Ձեռնարկն ուղղված է նաև ՀՀ պետական ծառայողներին և/կամ բնապահպանական կազմակերպությունների ներկայացուցիչներին, քանի որ նրանց աջակցությունը որոշիչ է հայ գործարարների կողմից կենսաբազմազանության կառավարման ներդրման ու զարգացման հարցում: Այսպիսով, կենսաբանական բազմազանության պաշտպանությունը մի ամբողջական հիմնախնդիր է, որի լուծման համար պատասխանատվություն պետք է ստանձնեն բոլորը՝ հասարակությունը, պետական կառույցները, ինչպես նաև մասնավոր ընկերությունները:

Գծապատկեր. Կենսաբազմազանության ձեռնարկատիրական կառավարում

(աղբյուր՝ Կենսաբազմազանության կառավարման ձեռնարկ. ուղեցույց պրակտիկ աշխատանքների համար. *„Գերմանիայի Դաշնության շրջակա միջավայրի, բնության պահպանության և միջուկային ռեակտորների անվտանգության“ նախարարության հրատարակություն)*

Ձեռնարկության ֆունկցիոնալ օղակները

հումքի ձեռքբերում	արտադրություն	մարքեթինգ	վաճառք և լոգիստիկա	գիտական հետազոտություն և զարգացում	անձնակազմի կառավարում

իրականացնում են միջոցառումներ

Ձեռնարկության գործունեության դաշտում

սպառողների ու շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ	մատակարարման շղթա, հումք և նյութեր	Ապրանքներ	արտադրության և վերամշակման գործընթաց	տրանսպորտ և լոգիստիկա	անձնակազմ	գտնվելու վայր և անշարժ գույք

որոնց միջոցով ազդում են

կենսաբազմազանության վրա	«Գործարարություն հանուն կենսաբազմազանության» խթանիչ ուժերի վրա
կենսամիջավայրի փոփոխում	ծախսեր
կլիմայի փոփոխություն	ապրանքաշրջանառություն և հասույթ
տեղանքի համար ոչ բնորոշ տեսակների առկայություն	ռիսկերի նվազեցում
էկոհամակարգերի բաղադրիչների օգտագործման չարաշահում	հեղինակություն և ապրանքանիշ
Արտանետումներ	նորամուծություններ
	գործարար մոդելներ

նպատակ ունենալով՝

խթանել ձեռնարկությունների կայուն զարգացումը՝ միևնույն ժամանակ աջակցելով կենսաբազմազանության պահպանությանը

2. Լավագույն փորձ. օրինակներ

2.1 «Սպառողների և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ»

Swarovski Optik

Տնտեսական գործունեության ճյուղ	-	Տեխնիկա
Չափսեր (2012թ.)	-	700-ից ավել աշխատակից, 117,6 միլիոն եվրո Դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	-	սպառողների և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ
Գործընկեր կազմակերպություն Կենսաբանազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	-	Birdlife
	-	Կանադական դեղձանիկի *(Cardellina canadensis)* թռչնատեսակի պաշտպանության օժանդակություն

Swarovski Optik-ը տեսողական սարքերի՝ հեռադիտակների, մանրադիտակների արտադրությամբ զբաղվող աշխարհի առաջավոր ընկերություններից է: Այն երկար տարիներ համագործակցում է Birdlife բնապահպանական կազմակերպության հետ: Բացի նրանից, որ Swarovski Optik-ը Birdlife-ին անհատույց տրամադրել է սեփական արտադրության բազմաթիվ բարձորակ հեռադիտակներ, ընկերությունն աջակցել է նաև բնապահպանական մեծ թվով նախագծերի իրականացմանը: 2011թ-ին ընկերության և Birdlife-ի միջև կնքվել է համագործակցության համաձայնագիր՝ համատեղ ուժերով օժանդակելու Կանադական դեղձանիկ (*Cardellina canadensis)* թռչնատեսակի պահպանությանը, կասեցնելու նրա պոպուլյացիայի շարունակական նվազումը: Քանի որ այդ փոքր թռչնատեսակի պոպուլյացիայի նվազման պատճառները պարզ չեն, նրանց սեզոնային միգրացիայի ճանապարհին ընկած բոլոր երկրներում ձևավորվել են մասնագետների խմբեր, որպեսզի համատեղ ուժերով կազմեն դեղձանիկներին ոչնչացումից փրկելու նախագիծ: Այդ նախագծին ֆինանսապես աջակցելով՝ Swarovski Optik-ը խթանում է կենսաբազմազանության պաշտպանությունը: Իր այդ գործունեությամբ ընկերությունը միևնույն ժամանակ ցույց է տալիս, որ օժանդակության այս ձևը կենսաբազմազանության պաշտպանությանն աջակցելու ամենահաջող օրինակներից է:

Lufthansa

Տնտեսական գործունեության ճյուղ	-	օդային տրանսպորտ
Չափսեր (2012թ)	-	117 440 աշխատակից, 30,1 մլրդ եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	-	սպառողների և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ
Գործընկեր կազմակերպություն Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	-	NABU
	-	կռունկների պաշտպանության օժանդակություն

Lufthansa-ն աշխարհի խոշորագույն ավիաուղիներից է: Ընկերությունը կռունկի հանդեպ ցուցաբերում է առանձնահատուկ վերաբերմունք, քանի որ այդ թռչունը պատկերված է ընկերության պատկերանշանի վրա և խորհրդանշում է Lufthansa-ն: Կեսամիջավայրի վերացման պատճառով կռունկների 15 տեսակներից 11-ը գտնվում են ոչնչացման եզրին: Դրանից ելնելով՝ ընկերությունն արդեն շուրջ 30 տարի է «Lufthansa շրջակա միջավայրի պահպանություն» ծրագրի շրջանակներում աջակցում է կռունկների և նրանց կենսամիջավայրի պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացմանը: Ընկերությունը, օրինակ, հովանավորել է NABU-ի և Վայրի բնության միջազգային հիմնադրամի (WWF) կողմից իրականացվող «Միասին փրկենք կռունկներին» ակցիան, որի նպատակն էր Գերմանիայում պահպանել ճահճուտներն ու այլ խոնավ տարածքները, որպես կռունկների համար համաշխարհային նշանակություն ունեցող բնակության և բազմացման միջավայրեր: Վերջերս, NABU-ն և WWF-ը Lufthansa-ի հետ համատեղ հիմնադրեցին «Կռունկների պաշտպանությունը Գերմանիայում» հասարակական կազմակերպությունը: Բացի դրանից, Lufthansa-ն ֆինանսապես օժանդակում է բնապահպանական կրթական կենտրոնների գործունեությանը: Հատկանշական է հյուսիս-արևելյան Գերմանիայի Մեծ Մոհրդորֆ գյուղում կռունկների մասին տեղեկատվական կենտրոնի հիմնադրումը: 2011թ.-ին ընկերությունը մոխրագույն կռունկի ձվեր փոխադրեց Մեծ Բրիտանիա, որտեղ դրանք տեղակայվեցին հատուկ բազմացման ինկուբատորներում: Այս միջոցառման նպատակը Մեծ Բրիտանիայում կռունկների վերաբնակեցումն էր 400 տարի ընդմիջումից հետո: Տեղափոխված ձվերից դուրս եկած 50 կռունկները պետք է սկիզբ դնեն Մեծ Բրիտանիայում այդ պոպուլյացիայի բնական ճանապարհով հետագա բազմացմանը:

Teegschwendner

Տնտեսական գործունեության ճյուղ	- սննդամթերքի վաճառք
Չափսեր (2012թ)	- 1300 աշխատակից, 60 մլն եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- սպառողների և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ
Գործընկեր կազմակերպություն Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- NABU
	- վագրերի պաշտպանությանը նվիրված ծրագրի հովանավորում

TeeGschwendner-ը ներկրում է թեյի տարբեր տեսակներ հարավային Հնդկաստանից: 1996թ.-ից սկսած ընկերությունը համագործակցում է Հնդկաստանում էկոլոգիապես մաքուր թեյի արտադրությամբ զբաղվող՝ Bombay Burma Trading Co. ընկերության հետ: Շուրջ 2000 տեղացիներ աշխատում են մանգոյի ջունգլիներում գտնվող թեյի երեք պլանտացիաներում և քամու էներգիայի, կենսագազի կայանքների, սեփական հիվանդանոցի, դպրոցի և մանկապարտեզի առկայության շնորհիվ ապրում են բացառապես սեփական միջոցներով փակ տնտեսության պայմաններում: Հետևելով հողի էկոլոգիապես մաքուր մշակման Ռուդոլֆ Շթայների կողմից առաջարկվող մեթոդներին՝ Bombay Burma Trading Co. ընկերությունն արտադրում է լավագույն որակի թեյատեսակներ՝ միաժամանակ ապահովելով տեղի անձրևային անտառների, այնտեղ աճող բույսերի և կենդանիների տեսակների բազմազանության պահպանությունը: Ներկայումս TeeGschwendner-ը NABU-ի հետ հարավային Հնդկաստանում իրականացնում է վագրերի պաշտպանության ծրագիր: Ընկերության ներկրած թեյը գնելով՝ սպառողները ուղղակիորեն խթանում են ծրագրի իրականացմանը: Յուրաքանչյուր 250 գրամ թեյի վաճառքից մեկ եվրո փոխանցվում է վագրերի պաշտպանության ծրագրի հիմնադրամին:

Werner & Mertz

Տնտեսական գործունեության ճյուղ	- կենցաղային քիմիա
Չափսեր (2012թ.)	- 910 աշխատակից, 248 մլն եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- սպառողների և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ
Գործընկեր կազմակերպություն Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեությունը	- NABU
	- գորտերի պաշտպանության հովանավորում

"Frosch"-ը (հայերեն՝ գորտ) Werner&Mertz-ին պատկանող Գերմանիայում ամենահայտնի մաքրման միջոցների ապրանքանիշերից մեկն է: Որպես խորհրդանիշ

ընդունելով գորտը՝ ընկերությունը պատասխանատվություն է ստանձնել պաշտպանել Գերմանիայի երկկենցաղներին: Այդ նպատակի իրականացման համար ընկերությունը մեծ ներդրումներ է կատարում երկկենցաղների կենսամիջավայրի՝ ջրային տարածքների պահպանության համար: Բացի այդ, սկիզբ դնելով «"Frosch"-ը պահպանում է գորտերին» նախաձեռնությանը, ընկերությունն ուղղակիորեն պարտավորություն է ստանձնում պահպանել կենսաբազմազանությունը: Այդ նպատակի իրականացման համար ընկերությունն արդեն երկար տարիներ համագործակցում է NABU-ի հետ: Այն օժանդակում է NABU-ին՝ վերաբնակեցնելու Հռենոսի ծանծաղուտները, ապահովելու տեսակներով հարուստ մարգագետինների անվտանգությունն ու կառուցելու այնպիսի ջրային կայաններ, որտեղ նպաստավոր պայմաններ կլինեն հազվագյուտ տեսակի երկկենցաղների բազմացման համար: NABU-ն Հռենոսի ծանծաղուտներում հաճախ կազմակերպում է տարբեր բնաճանաչողական շրջագայություններ: Այդ շրջագայությունների նպատակն է լուսաբանել ծառագորտերի կենսամիջավայրի առանձնահատկությունները և ներկայացնել տարածքում նրանց պոպուլյացիայի վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումները, իսկ Werner&Mertz-ը օժանդակում է այդ ծրագրի իրականացմանը:

ABUS

Տնտեսական գործունեության ճյուղ	-	անվտանգության տեխնիկա, հեծանիվների անվտանգություն
Չափսեր (2012թ.)	-	2500 աշխատակից
Գործունեության դաշտ	-	սպառողների և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ
Գործընկեր կազմակերպություն	-	NABU
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	-	Եթովպիայի վայրի սուրճի անտառների պաշտպանության հովանավորում

ABUS՝ August Bremicker Söhne KG ընկերությունը մեխանիկական և էլեկտրական անվտանգության սարքերի՝ հեծանիվների փականներից մինչև անվտանգության տեսախցիկների արտադրությամբ զբաղվող ընկերությունների խումբ է: "ABUS Ecolution" նախաձեռնության շրջանակներում ընկերությունը թողարկել է կախովի փականների նոր շարք՝ արտադրված վերամշակելի արտադրական թափոններից: Նախաձեռնությունը հայտնի է «զրոյական-թափոն-քաղաքականություն» անվանմամբ: Բացի շրջակա միջավայրի պաշտպանությունից, ընկերությունը օժանդակում է նաև կենսաբազմազանության պահպանությանը: "ABUS Ecolution"-ի շրջանակներում արտադրված յուրաքանչյուր կախովի փականի վաճառքից 50 ցենտ տրամադրվում է Եթովպիայի վայրի սուրճի անտառների պաշտպանության հիմնադրամին: 2.000 քառ. կմ անտառային այդ տարածքը տարածաշրջանի համար ունի առանձնահատուկ կարևոր

նշանակություն. այն կատարում է ջրային ռեսուրսների պահեստավորման ֆունկցիա և հանդիսանում է կենսաբանական բազմազանության կարևոր կենտրոն:

E-Plus-Gruppe

Տնտեսական գործունեության ճյուղ	- հեռահաղորդակցություն
Չափսեր	- 4000-ից ավել աշխատակից, 3,4 միլիարդ եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- սպառողների և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ
Գործընկեր կազմակերպություն	- NABU
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- Սպառողների կողմից վերադարձված բջջային հեռախոսների վերամշակման միջոցով բնապահպանական ծրագրերի հովանավորում

E-Plus-ը Գերմանիայում հեռահաղորդակցության առաջատար ընկերություններից է: NABU-ի հետ միասին ընկերությունը մշակել է բջջային հեռախոսակապի "կանաչ" տարիֆ: Տարիֆը նպատակ է հետապնդում բջջային հեռախոսի օգտագործումը դարձնել էկոլոգիապես մաքուր՝ շրջակա միջավայրի վրա հնարավորինս փոքր ազդեցությամբ: Սա վերաբերում է ծառայության արժեքի ձևավորման շղթայի բոլոր փուլերին՝ սկսած հեռախոսների արտադրության ժամանակ այլընտրանքային էներգիայի աղբյուրներից ստացվող էլեկտրականության օգտագործումից, E-Plus-ի SIM քարտերի համար պլաստմասսայից զերծ ամրակների արտադրությունից մինչև չօգտագործվող հեռախոսների վերամշակումը: Բացի այդ, E-Plus-ը իր ամսական զուտ եկամտի 15%-ը ներդնում է՝ ֆինանսավորելու NABU-ի կողմից բնության և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը: "Կանաչ" տարիֆի միջոցով ընկերությունն աջակցում է նաև կարևոր կենսամիջավայրերի, ինչպես նաև կենսաբանական որոշ տեսակների պահպանությանը: Այդ միջոցների մի մասն ուղղվում է NABU-ի կողմից իրականացվող «Հին բջջային հեռախոսները՝ հանուն Հաֆել գետի» ակցիայի ֆինանսավորմանը: Ակցիայի նպատակն է բնակչության մոտ բարձրացնել հին հեռախոսների վերամշակման հնարավորության գիտակցությունը և հասնել նրանց կողմից հանձնվող հեռախոսների քանակի սկզբնական շրջանում 3%-ով ավելացմանը: Ներկայումս յուրաքանչյուր հանձնված հին հեռախոսի դիմաց NABU-ն E-Plus Group-ից ստանում է երեք եվրո, որը հետագայում պլանավորվում է ավելացվել: Հին հեռախոսների վերամշակումից ստացված գումարներն ուղղվում են «Ներքին Հաֆել» բնապահպանական ծրագրի ֆինանսավորմանը, որի նպատակը ծանծաղուտների վերաբնականացումն է (բնական նախկին վիճակի վերականգնում):

Volkswagen

Տնտեսական գործունեության ճյուղ	- ավտոմեքենաների արտադրություն
Չափսեր (2012թ.)	- 550 000 աշխատակից, 192 676 միլիարդ եվրո Դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- սպառողների և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ
Գործընկեր կազմակերպություն	- NABU
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- կառուցողական երկխոսություն ՀԿ-ների հետ

Volkswagen AG-ն ավտոմեքենաների արտադրությամբ զբաղվող Եվրոպայի խոշորագույն ընկերությունն է: Ավելի քան մեկ տասնամյակ ընկերությանը NABU-ի հետ միավորում են բանավեճերը, որոնք հաճախ հանգեցնում են կառուցողական երկխոսության: Գործընկերները համատեղ պատասխանատվությամբ փորձում են գտնել քաղաքացիական հասարակության հետ համագործակցության նոր ձևեր: Բացի այն հանգամանքից, որ Volkswagen-ը պատրաստ է երկխոսություն սկսել շրջակա միջավայրի վրա հնարավորինս քիչ բացասական ազդեցություն ունեցող մեքենաների արտադրության, և այդ արտադրության ընթացքում ռեսուրսների խնայողաբար օգտագործման շուրջ, այն նաև օժանդակում է բնության պահպանությանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Համագործակցության հաջողությունները բազմակողմանի են: Volkswagen-ը պլանավորում է առավելագույնը մինչև 2018թ.-ը ավտոմեքենաների արտադրության մեջ դառնալ աշխարհի առաջատար ոչ միայն տնտեսական, այլ նաև բնապահպանական առումով: Իրերի այսպիսի ընկալումը ընկերության տարբեր մակարդակներում տարիներ շարունակ իրականացված խորհրդատվական աշխատանքների արդյունք է: Volkswagen-ի և NABU-ի միջև համագործակցությունը հիմնվում է երեք կարևոր սյուների վրա՝ խորհրդատվություն, հասարակական բաց երկխոսություն և բնապահպանական միջոցառումների համատեղ իրականացում: Այս ամենի առաջնային նպատակը Volkswagen-ի աշխատակիցներին ու սպառողներին և NABU ՀԿ-ի անդամներին միևնույն նպատակի շուրջ համախմբելն է:

Globetrotter Ausrüstung

Տնտեսական գործունեության ճյուղ	- առևտուր
Չափսեր (2012թ.)	- 1 500 աշխատակից, 250 մլն եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- սպառողների և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ
Գործընկեր կազմակերպություն	- NABU

Կենսաբազմազանության

պահպանությանն ուղղված գործունեություն	- NABU-ի հասարակության հետ կապերի աշխատանքների հովանավորում

Globetrotter Ausrüstung–ը Եվրոպայի outdoor (արշավային և տարբեր սպորտաձևերի համար նախատեսված) հագուստների ու սարքավորումների վաճառքով զբաղվող խոշորագույն ընկերություններից մեկն է: Այն արդեն երկար տարիներ արդյունավետ համագործակցում է NABU-ի հետ: Դեռևս 1995թ-ին ընկերությունը NABU-ի հետ միասին առաջին անգամ կազմակերպեց այսպես կոչված «Hanse շրջակա միջավայր» մրցանակաբաշխությունը: Այդ ժամանակից ի վեր՝ տարեկան մեկ անգամ, Համբուրգ քաղաքի բնակիչներին տրվում է այդ մրցանակը կլիմայի և բնության պաշտպանության ոլորտում ունեցած նեդրումների համար: Բնակչության առօրյա հետաքրքրությունը շրջակա միջավայրին և բնության պահպանությանն առնչվող հարցերի շուրջ բավարարելու նպատակով NABU Դաշնային Միությունը, Globetrotter Ausrüstung-ի աջակցությամբ, ստեղծել է *"NABUtv"* ինտերնետային ալիքը: Այդ ալիքով կարելի է դիտել հետաքրքիր ֆիլմեր բնության երևույթների, կենդանիների, ընկերության կողմից տեղում իրականացվող նախագծերի մասին, ինչպես նաև՝ ուղեցույց-ֆիլմեր, օրինակ՝ այն մասին, թե ինչպես պատրաստել տարբեր կենդանիների կամ թռչունների համար բներ:

Freiland Puten Fahrenzhausen

Տնտեսական գործունեության ճյուղ	- սննդամթերքի արտադրություն
Չափսեր (2012թ.)	- 15 աշխատակից
Գործունեության դաշտ	- սպառողների և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ
Գործընկեր կազմակերպություն	- NABU
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- պահպանության նպատակով բնական տարածքների գնման հովանավորում

Freiland Puten Fahrenzhausen GmbH-ն մասնագիտացված է հնդկահավի էկոլոգիապես մաքուր մսի արտադրության մեջ: Այս փոքր գյուղացիական տնտեսությունն արտադրում է օրգանական թռչնամիս՝ խստորեն հետևելով էկոլոգիապես մաքուր արտադրության կանոնակարգին: Արտադրության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում կենդանիների համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: Այդ նպատակով ամբողջ տարվա ընթացքում կիրառվում է թռչունների պահվածքի զբոսաբակային եղանակ և բուծվում են բացառապես KellyBronze տեսակին պատկանող դիմացկուն հնդկահավեր: 2011թ.-ից տնտեսությունն աջակցում է NABU-ի ճահճուտների պաշտպանությանն ուղղված նախագծի իրականացմանը: Գտնվելով Գերմանիայի Դաշնության Մեքլենբուրգ-Ֆորփոմմերն (Mecklenburg-Vorpommern) դաշնային երկրամասի տարածքում՝ ընկերությունն աջակցում է այդ երկրամասում իրականացվող ծրագրերին: Օրինակ՝ Freiland Puten Fahrenzhausen GmbH-ն ֆինանսական միջոցներ է տրամադրում Ռյուգեն

կղզու վրա NABU-ի «Կարմիր լիճ» նախագծի իրականացման համար: Այդ շուրջ 230 հա տարածությունը հարյուրամյակներ շարունակ էքստենսիվ եղանակով օգտագործվել է որպես արոտավայր: NABU-ի «Ազգային բնական ժառանգություն» հիմնադրամը կարողացել է ձեռք բերել այդ տարածքի 100 հեկտարը: Պլանավորվում է տարածքի մնացած մասը ևս ձեռք բերել վերաբնականացնելու նպատակով: Ժամանակի ընթացքում հնարավոր է այն վերածել տեղանքին հատուկ մեռած փայտով հարուստ ճահճուտների ու անտառների, որոնք նորից կենսամիջավայր կարող են ծառայել հազվագյուտ բույսերի ու կենդանիների տեսակների համար, օրինակ՝ Փոքր ճանճորսի (Ficedula parva), ճահճային գորտի (Rana arvalis) և այլ տեսակների համար:

Jack Wolfskin

Տնտեսական գործունեության ճյուղ	- հագուստի արտադրություն
Չափսեր	- 630 աշխատակից (2012թ.), 355 մլն եվրո դրամաշրջանառություն (2011թ.)
Գործունեության դաշտ	- սպառողների և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ
Գործընկեր կազմակերպություն	- Գերմանիայի բնության պահպանության գործակալություն (BfN)
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- «Գերմանիայի բնության պահպանություն» մրցանակի ֆինանսավորում

Jack Wolfskin -ը զբաղվում է, outdoor սպորտային համազգեստների, պարագաների (վրաններ, ճամփորդական պայուսակներ և այլն) և կոշիկների արտադրությամբ: Գերմանիայի բնության պահպանության գործակալության (BfN) հետ միասին ընկերությունն իրականացնում է «Գերմանիայի բնության պահպանություն» մրցանակաբաշխության նախագիծը: Այն Գերմանիայի տարածքում բնության պահպանությանն ուղղված գաղափարների մրցույթ է: Սկսած 2011թ.-ից ծրագիրն իրականացվում է ամեն տարի: Այն նպատակ ունի խթանելու բնության պահպանության գիտակցության բարձրացումն ու դրանում քաղաքացիների մասնակցությունը: Գոյություն ունեն մրցանակների երեք տարբեր տեսակներ՝ խթանող, քաղաքացիական և պատվավոր: Մրցույթի թեմաները տարբեր տարիներին տարբեր են: Առաջարկված գաղափարները, բացի բովանդակային առանձնահատկությունից, պետք է հնարավորինս արագ իրականացման երաշխիք ապահովեն: Նախագծի չափսերն այս դեպքում կարևոր չեն: Հիմնական նպատակը առաջարկված գաղափարի իրականացման արդյունքում բնության պահպանությանը նպաստող որևէ առաջընթաց քայլ կատարելն է: Հիմնականում պարգևատրվում են տեսակների և կենսամիջավայրերի պաշտպանությունը խթանող նոր, ապագային ուղղված և օրինակելի գաղափարները: Բնապահպանական կրթական ծրագրերը ևս հաղթելու մեծ հավանականություն ունեն: Առաջարկված նախագծերը պետք

է կարողանան հիացմունք և համագործակցության ցանկություն առաջացնել, և գտնվեն մարդիկ, որոնք կցանկանան նմանատիպ նախագծեր իրականացնել Գերմանիայի այլ տարածքներում: Այս ծրագրի իրականացման համար Jack Wolfskin–ը տարեկան տրամադրում է շուրջ 250 000 եվրոյի ֆինանսական աջակցություն:

2.2 «Մատակարարման շղթա, հումք և նյութեր»

Otto-Group

Տնտեսական գործունեության ճյուղ	-	առևտուր
Չափսեր (2012թ.)	-	53,823 աշխատակից , 11,8 մլրդ եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	-	մատակարարման շղթա, հումք և նյութեր
Գործընկեր կազմակերպություն Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	-	NABU
	-	մատակարարման շղթայի կայունության խիստ վերահսկողություն

Otto-Goup-ը խոշոր առևտրային ընկերություն է, որի կառավարման հիմքում ընկած են խորը պատասխանատվության գիտակցությունն ու էթիկան: Դեռևս 1986 թ.-ին դոկտոր Օտտոն շրջակա միջավայրի պաշտպանությունը հայտարարել է ընկերության կարևորագույն նպատակներից մեկը: Այդ ժամանակից ի վեր՝ ընկերությունն օժանդակում է NABU-ին՝ իրականացնելու բնության պահպանությանն ուղղված միջոցառումներ, օրինակ՝ սպիտակ արագիլի պաշտպանությունը կամ գետերի վերաբնականացումը: Ընկերության ներսում ևս ձեռնարկվում են միջոցառումներ, որոնք ուղղված են շրջակա միջավայրը խնայող ապրանքատեսակների ընտրությանը: Դոկտոր Օտտոն, ընկերության կառավարման ռազմավարությունն ընտրելիս շեշտը դրել է կայունության, այլ ոչ թե ոլորտում առաջատարը դառնալու վրա: Դրա շնորհիվ նա պարգևատրվել է բազմաթիվ մրցանակներով: Ընկերության խոշորագույն նախաձեռնություններից է "Cotton made in Africa"-ն (բամբակ՝ արտադրված Աֆրիկայում): Աֆրիկայում ընկերությունը համագործակցում է շուրջ 237,000 մանր գյուղացիական տնտեսությունների հետ, որոնք աֆրիկյան հինգ երկրներում զբաղվում են բամբակի արտադրությամբ՝ խստորեն հետևելով կայուն կառավարման սկզբունքներին: Otto-Goup-ի կողմից վաճառվող ապրանքն մեծամասամբ արտադրված է այդ հումքից: Ընկերության "Ecorepublic" ապրանքանիշը կայուն կառավարման սկզբունքներով արտադրված ապրանքի խորհրդանիշ է, որի շուրջ 3600 անուն ապրանքների մատակարարման շղթան՝ հումքի ձեռքբերում, արտադրություն և առաքում, իրականացվում է կայունության սկզբունքների խիստ վերահսկողությամբ:

Märkisches Landbrot

Տնտեսական գործունեության ճյուղ	- սննդամթերքի արտադրություն
Չափսեր (2011թ.)	- 101 աշխատակից , 13 մլն եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- մատակարարման շղթա, հումք և նյութեր
Գործընկեր կազմակերպություն	- օրգանական գյուղմթերքներ արտադրող գյուղացիական տնտեսություններ
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- շրջանառությունից դուրս, տեղանքին բնորոշ հացահատիկի տեսակների վերաշրջանառում

Märkisches Landbrot-ը Բեռլինի հացի փուռերից մեկն է, որն իր գործունեության ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձնում շրջակա միջավայրի պաշտպանությանը: Այն պատկանում է Demeter էկոլոգիական միությանը, որի փիլիսոփայության հիմքում ընկած է էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրությունը՝ հանուն մարդկության բարօրության: Märkisches Landbrot-ը արտադրության կազմակերպման ընթացքում հետևում է EMAS-ի (որը հայտնի է նաև Եվրոպական օրգանական աուդիտ անվանմամբ) շրջակա միջավայրի կառավարման համակարգի սերտիֆիկացման սկզբունքներին: 2010թ.-ին՝ առաջին անգամ Եվրոպայում, ընկերությունը սահմանեց և հրատարակեց իր արտադրության բոլոր հացամթերքների Product Carbon Footprint-ը (մատակարարման և արտադրության շղթայի բոլոր փուլերում ուղղակի կամ անուղղակի ճանապարհով մթնոլորտ արտանետվող ածխաթթու գազի ամբողջ քանակի հաշվարկ): Բացի այդ, ընկերությունն օժանդակում է Մադագասկարում անտառների վերատնկման նախագծին՝ նպատակ ունենալով փոխհատուցել արտադրության արդյունքում արտանետված ածխաթթու գազի (CO_2) վնասները: Կենսաբազմազանության պահպանությունը Märkisches Landbrot-ի կառավարման մյուս կարևորագույն ուղղություններից է: Համագործակցելով գյուղացիական տնտեսությունների հետ՝ ընկերությունը խթանում է շրջանառությունից դուրս եկած, բայց տեղանքի համար բնորոշ հացահատիկի տեսակների արտադրությունը:

2.3 «Ապրանք»

TUI

Տնտեսական գործունեության ճյուղ	- Տուրիզմ
Չափսեր (2011թ.)	- 73 812 աշխատակից , 18 330 մլրդ եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- ապրանք, սպառողների ու շահագրգիռ անձանց հետ հարաբերություններ
Գործընկեր կազմակերպություն	- «Գլոբալ բնության հիմնադրամ»
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- մանգրենի անտառների պաշտպանություն

TUI-ին Եվրոպայի խոշորագույն տուրիստական ընկերություններից է, որը հստակ գիտակցում է, որ իր գործունեությունը բացասաբար է ազդում կենսաբազմազանության վրա: Այն նվազեցնելու կամ փոխհատուցելու նպատակով ընկերությունը համագործակցում է բնապահպանական ՀԿ-ների, գործակալությունների և գիտնականների հետ: Միասին նրանք վերլուծում են ընկերության գործունեության բացասական ազդեցության հետևանքները շրջակա միջավայրի վրա, որի հիման վրա ընկերությունը փորձում է նվազեցնել դրանք և առավել էկոլոգիապես մաքուր ծառայություններ մատուցել: Կենսաբազմազանության պաշտպանությանն աջակցելու նպատակով ընկերությունը ֆինանսավորում է Շրի Լանկայի մանգրենի անտառների պաշտպանությանն ուղղված ծրագրերը: 2009թ-ին «Գլոբալ բնության հիմնադրամ» հասարակական կազմակերպության հետ միասին TUI-ն կազմակերպեց բնագիտական ճամփորդություն Շրի Լանկայի մանգրենի անտառներում գտնվող Մադամփա լիճ: Տուրիստներն այնտեղ հնարավորություն ունեցան ծանոթանալու տեղի ձկնորսության բնական մեթոդների և թռչնատեսակների բազմազանության հետ:

Ecover

Տնտեսական գործունեության ճյուղ	- կենցաղային քիմիա
Չափսեր (2012թ.)	- 300 աշխատակից ամբողջ աշխարհում, 180 մլն. եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- ապրանք
Գործընկեր կազմակերպություն	- համալսարաններ, այդ թվում՝ Շտուտգարտի Նոթթինգհամի, Վիեննայի և Գենտի
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված	

գործունեություն	- կենսաբազմազանության պահպանության համար ընդունելի ապրանքների հետազոտություն և զարգացում

Ecover-ը աշխարհի խոշորագույն էկոլոգիապես մաքուր լվացքի և մաքրման միջոցների արտադրությամբ զբաղվող ընկերություն է: Ընկերության օճառի արտադրությամբ զբաղվող մասնաճյուղի ղեկավար Ֆրանս Բոգերտը ֆոսֆատի ջրային կենդանիների վրա ունեցած բացասական ազդեցություններն ուսումնասիրելուց հետո հիմնադրեց մաքրման միջոցների, ջրային համակարգի համար վտանգ չներկայացնող ապրանքների արտադրություն: Այսպիսով, Ecover-ը առաջին ընկերություններից էր, որը սկսեց արտադրել ֆոսֆատի պարունակությունից զերծ մաքրման միջոցներ: Ներկայումս այն Եվրոպայում էկոլոգիապես մաքուր լվացքի ու մաքրման միջոցների շուկայի առաջատարն է: Բոլոր ապրանքներն արտադրվում են բնական հումքից և զերծ են ֆոսֆատի ու քլորի պարունակությունից: Փաթեթավորման բոլոր նյութերը հնարավոր է վերամշակել: Ավելորդ աղբի առաջացումից խուսափելու համար պոլիէթիլենի շշերը վերալցվում են: Ecover-ը վարում է կայուն կառավարման լիարժեք ռազմավարություն և համագործակցում է մի շարք համալսարանների հետ՝ առավել զարգացնելու ձկների և մյուս ջրային կենդանիների համար անվնաս մաքրման միջոցների արտադրությունը:

Bionade

Տնտեսական գործունեության ճյուղ	- սննդամթերքի արտադրություն
Չափսեր (2009թ.)	- 109 աշխատակից, 180 մլն. եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- ապրանք
Գործընկեր կազմակերպություն	- NABU
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- խմիչքների արտադրության համար հազվագյուտ մրգատեսակների օգտագործում, որի շնորհիվ խրախուսվում է մրգերի տեսակների բազմազանության պահպանությունը

Bionade-ը, որը նախկինում փոքր ընտանեկան ընկերություն էր, այժմ պատկանում է Oetker կոնցեռնին: Կարճ ժամանակահատվածում Bionade-ի արտադրած խմիչքները Գերմանիայում դասվեցին ամենապահանջված խմիչքների շարքում: Օրգանական այդ լիմոնադների հումքն ամբողջությամբ ստացվում է բնական ճանապարհով: Կենսաբազմազանության պահպանությունն ու պաշտպանությունը ընկած են ընկերության որդեգրած փիլիսոփայության հիմքում: Արդեն մի քանի տարի է, ինչ ընկերությունն անդամակցում է կենսաբազմազանության պահպանության կազմակերպությունների կողմից իրականացվող տարբեր տիպի նախաձեռնություններին:

NABU-ի հետ համագործակցելով՝ օրգանական լիմոնադ արտադրող այս ընկերությունը շուկա հանեց "Streuobst" օրգանական լիմոնադը: Լիմոնադի պատրաստման համար անհրաժեշտ մրգատեսակները՝ խնձոր, սերկևիլ, սալոր և տանձ, ստացվում են վայրի ծառերից, որոնք մշակվում են NABU-ի կողմից սահմանված բնությանը չվնասող չափանիշներով: NABU-ի և Bionade-ի համագործակցության շնորհիվ պաշտպանվում են 5000 բույսերի և կենդանիների, ինչպես նաև շուրջ 3000 պտուղների տեսակներ:

Hotel Fünfseeblick

Տնտեսական գործունեության ճյուղ	- Տուրիզմ
Չափսեր	- *տվյալները բացակայում են*
Գործունեության դաշտ	- ապրանք
Գործընկեր կազմակերպություն	- "Kellerwald- Edersee" ազգային պարկ
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- հյուրանոցային սենյակների տրամադրում՝ ելնելով բնապահպանական սկզբունքներից

"Fünfseenblick"-ը, բացի հյուրանոցային ծառայություններ մատուցելուց, տրամադրում է նաև սենյակներ սեմինարների անցկացման համար: Այնտեղ գիշերողներն ու սեմինարներ կազմակերպողները Kellerwald-Edersee ազգային պարկի այցելուներն են: Հյուրերին տրամադրվում է բացառապես օրգանական արտադրության բուսական սնունդ:

Delinat AG

Տնտեսական գործունեության ճյուղ	- սննդամթերքի առևտուր
Չափսեր (2012թ.)	- 10 աշխատակից
Գործունեության դաշտ	- ապրանք, մատակարարման շղթա, հումք և նյութեր
Գործընկեր կազմակերպություն	- համալսարաններ, հետազոտական կենտրոններ
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- էկոլոգիապես մաքուր խաղողի աճեցման չափանիշների սահմանում

Delinat-ը էկոլոգիապես մաքուր արտադրված խաղողի տեսակներից պատրաստված բարձրարժեք գինու համացանցային առքուվաճառքով զբաղվող շվեյցարական ընկերություն է: Գինիների արտադրության համար հումք հանդիսացող օրգանական խաղողի արտադրությամբ զբաղվում են Եվրոպայի տարբեր

տարածաշրջաններում գտնվող շուրջ 100 խաղողագործական տնտեսություններ՝ ընդհանուր 2500 հա տարածքի վրա: Արտադրությունը իրականացվում է Delinat-ի կողմից սահմանված օրգանական արտադրության չափանիշներին համապատասխան: Ներարկման միջոցներին, պարարտանյութերին, կենսաբազմազանության պաշտպանությանը, գինիների ստացման տեխնոլոգիաներին վերաբերող այդ չափանիշները առավել խիստ ու հետևողական են, քան էկոլոգիապես մաքուր գինու արտադրության օրենսդրական պահանջները: Այդ չափանիշները սահմանվում են՝ ընկերությանը կից «Էկոլոգիա և կլիմայի պաշտպանություն» գիտահետազոտական ինստիտուտի հետազոտության արդյունքներից ելնելով: Վերջինս հետազոտությունների նպատակն է գտնել շրջակա միջավայրի և կլիմայի վրա չեզոք ազդեցություն ունեցող և կենսատեսակների բազմազանությունը խթանող խաղողի արտադրության ու վերամշակման ուղիներ: Հասարակական հիմունքներով գործող այդ հիմնադրամը ստեղծվել է 2009թ.-ին Delinat-ի հիմնադիր Կառլ Շեֆերի և ինստիտուտի տնօրեն Հանս-Փեթեր Շմիդթի կողմից: Delinat ընկերությունը տարեկան դրամաշրջանառության 1%-ը տրամադրում է ինստիտուտին հետազոտական աշխատանքների իրականացման համար: Բացի այդ, ընկերությունը համագործակցում է այդ ոլորտում գիտական հետազոտություններ կատարող այլ համալսարանների ու գիտահետազոտական կենտրոնների հետ: Գիտական փորձարկումներ կատարվում են հետևյալ ուղղություններով՝ բորբոսի դեմ պայքարի ժամանակ պղնձի օգտագործման կրճատում, նոր տեսակների աճեցում, մթնոլորտային արտանետումների կրճատում, սնկային հիվանդությունների հանդեպ դիմացկուն սորտերի մշակում և այլն:
Բնության և կենսաբազմազանության պահպանության գործում իր ներդրումների համար ընկերությունը 2013թ.-ին արժանացել է կենսաբազմազանության պահպանության ԿՍՊ մրցանակին:

Almaa Sintra Hostel

Տնտեսական գործունեության ճյուղ	-	Տուրիզմ
Չափսեր (2012թ.)	-	*5 աշխատակից*
Գործունեության դաշտ	-	ապրանք
Գործընկեր կազմակերպություն	-	Quercus ՀԿ
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	-	կենսաբազմազանության "check" և տնտեսական գործունեության կազմակերպում, որը չի վնասում բնությանը

Das Almáa Sintra Hostel-ը Պորտուգալիայի Սինտրա լեռներում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից համաշխարհային ժառանգություն ճանաչված մշակութային մեծ արժեք ունեցող անտառում գտնվող էկո-հյուրանոց է: Հյուրանոցի կառավարման հիմքում ընկած են հասարակության հանդեպ պատասխանատվության և կայուն կառավարման

սկզբունքները: Ընկերությունը իրականացրել է կենսաբազմազանության "check" իր գործունեության տեսակների բազմազանության վրա ունեցած ազդեցության հետազոտման նպատակով, որից հետո հրատարակել է հյուրանոցի բնության համար անվնաս գործունեության կազմակերպմանն ուղղված ուղեցույց: Բացի այդ, Quercus հասարակական կազմակերպության հետ միասին նախագծել և տուրիստների համար բացել է բնական արշավային ճանապարհներ:

Neumarkter Lammsbräu

Տնտեսական գործունեության ճյուղ	- սննդամթերքի արտադրություն
Չափսեր (2011թ.)	- 101 աշխատակից, 13 մլն եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- ապրանք , արտադրական և վերամշակման գործընթացներ
Գործընկեր կազմակերպություն	- անկախ կենսաբաններ
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- Էկոլոգիապես մաքուր խմիչքների արտադրություն

Neumarkter Lammsbräu-ը գարեջրի արտադրությամբ զբաղվող միջին ընկերություն է: Սկսած 1987թ.-ից այն խմիչքների արտադրության համար օգտագործում է էկոլոգիապես մաքուր հումք: Ներկայումս ընկերության արտադրության խմիչքները՝ գարեջրի ու լիմոնադների տարբեր տեսակներ, պարունակում են բացառապես օրգանական բաղադրիչներ: 2001թ.-ին, Neumarkter Lammsbräu-ն առաջին ընկերությունն էր, որը պարգևատրվեց գերմանական «Շրջակա միջավայրի պաշտպանության» մրցանակով: Խմիչքների արտադրության համար օգտագործվող կարևորագույն ռեսուրսի՝ ջրի պահպանությունը խթանելու նպատակով ընկերության օժանդակությամբ հրատարակվել է «Ջրի պաշտպանության չափանիշների» ձեռնարկ, որում ներկայացված չափանիշները ավելի խիստ են օրենսդրական պահանջներից: BioKristall աղբյուրն այս տեսանկյունից աշխարհի առաջին սերտիֆիկացված օրգանական հանքային ջրի աղբյուրն է: Neumarkter Lammsbräu-ը պարտավորվում է իրականացնել շրջակա միջավայրի, հատկապես ջրային ռեսուրսների պաշտպանության և խնայողության միջոցառումներ:

2.4 «Արտադրության և վերամշակման գործընթաց»

Barlinek

Տնտեսական գործունեության ճյուղ	- փայտամշակում

Չափսեր (2012թ.)	- 3320 աշխատակից, 172 մլն եվրոյի դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- արտադրական և վերամշակման գործընթացներ, սպառողների և շահագրգիռ խմբերի հետ հարաբերություններ
Գործընկեր կազմակերպություն	- տեղի բնապահպանական ՀԿ-ներ
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- արդյունաբերական անտառներում տեսակներով հարուստ միջավայրի ձևավորում

Barlinek-ը բնական փայտից մանրահատակի արտադրությամբ զբաղվող աշխարհի խոշորագույն ընկերություններից է: Քանի որ փայտը հանդիսանում է արտադրության հիմնական հումքը, լեհական այս ընկերությունը արտադրության կառավարման ժամանակ կարևորում է կայունությունը և ձգտում իր արտադրությունը կազմակերպել շրջակա միջավայրի վրա հնարավորինս փոքր ազդեցությամբ: Փայտի և արտադրական այլ թափոնները օգտագործվում են կենսագազի կայանքներում էներգիայի արտադրության նպատակով: Բացի այդ, ընկերությունը անց է կացնում ակցիաներ հումքի արտադրության համար արդյունաբերական անտառներում աճեցվող ծառերի բազմատեսակությունն ապահովելու նպատակով: Յուրաքանչյուր վաճառված միավոր արտադրանքի դիմաց, որի վրա փակցված է ակցիայի պատկերանիշը, տնկվում են նոր ծառեր: Արդյունաբերական անտառի նախկին միատեսակությունը վերացնելու համար տնկված նոր ծառերը պետք է լինեն բազմատեսակ: Նոր տեսակներով հարուստ արդյունաբերական այդ անտառը կոչվում է «սպառողների» անտառ: 2011թ.-ի սկզբի դրությամբ այնտեղ տնկվել է 6.5 միլիոն ծառ:

HiPP

Տնտեսական գործունեության ճյուղ	- սննդի արտադրություն
Չափսեր (2012թ.)	- 2000 աշխատակից, 500 մլն եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- արտադրական և վերամշակման գործընթացներ
Գործընկեր կազմակերպություն	- Մյունխենի և Հաննովերի համալսարաններ, Բավարիայի թռչունների պաշտպանության միություն
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- հողի բերքատվության բարձրացման և կենսաբանական բազմազանության

ավելացման մեթոդների փորձարկում,
անձնակազմի հետ աշխատանք

Ընտանեկան փոքր ընկերություն Hipp-ը զբաղվում է մանկական սննդի արտադրությամբ: Բացառապես էկոլոգիապես մաքուր հումք ստանալու համար, ընկերությունը Գերմանիայի հարավում գտնվող Փֆաֆենհոֆեն բնակավայրում ունի օրինակելի գյուղացիական տնտեսություն: Այդ հողատարածքի վրա Hipp-ը Մյունխենի, Հաննովերի համալսարանների, Bioland հասարակական կազմակերպության և Բավարիայի թռչունների պաշտպանության միություն հետ միասին հետազոտություններ է կատարում՝ բացահայտելու հողի մշակման ժամանակ բերքատվության բարձրացման և կենսաբանական բազմազանության ավելացման հնարավորությունները: Այդ հետազոտությունների ժամանակ հաշվի են առնվում ինչպես առկա բուսական և կենդանական աշխարհը, այնպես էլ հողի որակը: Տարբեր հողակտորներից վերցված փորձանմուշների միջոցով կատարվել է քարտեզագրում և կազմվել է այդ հողերի վրա գոյություն ունեցող տեսակների պլան: Այդ տվյալները հինգ տարի շարունակ պարբերաբար ստուգվում և վերագնահատվում են: Կազմակերպվում են նաև էքսկուրսիաներ գիտնականների, ուսանողների ու դպրոցականների համար՝ նպատակ ունենալով ավելի խորությամբ բացատրելու կենսաբանական բազմազանություն թեմայի կարևորությունն ու առանձնահատկությունները: Hipp ընկերության անձնակազմն ու պրակտիկատները ևս պարբերաբար օժանդակում են կլիմայի և շրջակա միջավայրի պաշտպանությանը՝ տնկելով ծառուղիներ, հազվագյուտ ծառատեսակների «կղզիներ»: Նրանք կառուցում են «բնակարաններ» մողեսների և միջատների համար և փայտե բներ՝ թռչունների համար: Գյուղացիական տնտեսությունում բազմացվում են նաև ոչնչացման եզրին գտնվող կովերի, ոչխարների կամ թռչնազգիների տեսակներ:

Faber-Castell

Տնտեսական գործունեության ճյուղ	- գրենական պիտույք
Չափսեր (2012թ.)	- 7000 աշխատակից, 570,5 մլն եվրոյի դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- արտադրական և վերամշակման գործընթացներ
Գործընկեր կազմակերպություն	- անկախ կենսաբաններ
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- Բրազիլիայում անտառատնկման նախագծերի աջակցություն

Faber-Castell-ը աշխարհի խոշորագույն գունավոր գրիչների ու մատիտների արտադրությամբ զբաղվող ընկերություններից է: Ընկերությունը 1992թ-ից սկսած համագործակցում է Բրազիլիայի անկախ կենսաբանների հետ՝ հաշվառելով ու փաստաթղթավորելով ընկերությանը պատկանող անտառներում կենդանիների ու

բույսերի տեսակների փոփոխությունը: Շուրջ 2800 հա բնական անտառները, որոնք ընկած են ընկերության սեփականություն հանդիսացող սոճուտներում, յուրահատուկ ապաստան են տեղի բնական ու կենդանական աշխարհի համար: Տարեկան մեկ անգամ իրականացվող հաշվառումը ցույց է տվել կենսաբազմազանության նշանակալի աճ: Faber-Castell-ի նպատակն է այդ բազմազանությունը պահպանել ու խթանել նրա աճը՝ միևնույն ժամանակ բարձրացնելով իր աշխատակիցների ու տեղի բնակչության գիտակցությունը շրջակա միջավայրի ու կենսաբազմազանության պաշտպանության ուղղությամբ: Բացի այդ, ընկերությունն աջակցում է արդեն հատված անտառների վերատնկման գործընթացներին: Վերատնկումից հետո անտառներում տեղադրվում են հսկիչ տեսախցիկներ անտառները անօրինական հատումներից պաշտպանելու նպատակով: Faber-Castell-ի համար անտառների վերատնկման այդ գործընթացն ունի նաև տնտեսական մեծ նշանակություն, քանի որ դրանով ընկերությունն ապահովում է իրեն երկարաժամկետ հումքով: Միևնույն ժամանակ այդ միջոցառումները նպաստում են շրջակա միջավայրի պաշտպանությանը և սպառողների գիտակցության բարձրացմանը:

2.5 «Տրանսպորտ ու լոգիստիկա»

Österreichische Bundesbahnen

Տնտեսական գործունեության ճյուղ	- Տրանսպորտ
Չափսեր (2012թ.)	- 40 833 աշխատակից, 5 272 մլն եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- տրանսպորտ և լոգիստիկա, գտնվելու վայր և անշարժ գույք
Գործընկեր կազմակերպություն	- անկախ կենսաբաններ
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեությունը	- առանց բնությանը վնասելու ճանապարհների կառուցում

Österreichische Bundesbahnen Ավստրիայի խոշորագույն տրանսպորտային ընկերությունն է, որը զբաղվում է նաև երկաթուղային ցանցի կառավարմամբ: Երկաթուղային տրանսպորտն առհասարակ բնությանն ու շրջակա միջավայրին ամենաքիչ վնաս հասցնող տրանսպորտային միջոցն է: Բացի այդ, ընկերությունը ուղղակիորեն է աջակցում կենսաբազմազանության պահպանությանը: Ավստրիական գնացքների երկաթգծերը շատ հաճախ որոշ տեսակների համար ծառայում են որպես կենսամիջավայր: Երկաթգծերի շրջակա տարածքը հաճախ վեր է ածվում հարյուրավոր, մասամբ հազվագյուտ տեսակի բույսերի և կենդանիների համար «բնակավայրի»: Ճանապարհների երկայնքով տարածված են այնպիսի տեսակներ, որոնք այլ վայրերում «մաքրված» կենսամիջավայրերի պատճառով գտնվում են ոչնչացման եզրին: Երկաթուղային ճանապարհները գնացքների երթևեկությունը խանգարող մոլախոտերից մաքրելիս ընկերությունը փորձում է խուսափել քիմիական միջոցներից՝ կիրառելով այլընտրանքային, բնությունը խնայող մեխանիկական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են հնձումը, մոլախոտերի գոլորշիով վերացումը և այլն:

2.6 «Անձնակազմ»

HSBC

Տնտեսական գործունեության ճյուղ	- Ֆինանսներ
Չափսեր (2012թ.)	- 270 000 աշխատակից, 2 692 մլրդ դոլարի ընդհանուր ակտիվներ
Գործունեության դաշտ	- Անձնակազմ
Գործընկեր կազմակերպություն	- բնապահպանական ՀԿ-ներ
Կենսաբազմազանության	

պահպանությանն ուղղված գործունեությունը	- բանկի աշխատակիցներին կենսաբազմազանությանն ուղղված կամավոր աշխատանքների իրականացման հնարավորությունների ընձեռում

HSBC-ն աշխարհի խոշորագույն բանկերից է: 2007թ.-ից սկսած բանկը համագործակցում է բնապահպանական ՀԿ-ների հետ: Մինչ այժմ բնապահպանական կազմակերպություններին բնության և շրջակա միջավայրի պաշտպանության տարբեր նախագծերի իրականացման համար բանկը նվիրաբերել է շուրջ 100 մլն դոլար: Նախագծերի իրականացմանը կամավոր հիմունքներով իրենց մասնակցությունն են ցուցաբերել բանկի աշխատակիցները: Նրանցից շատերը մասնակցում են բանկի կողմից ֆինանսավորվող աշխարհի խոշորագույն «անտառների հետազոտություն» նախագծին: Աշխատակիցների մեկ այլ խումբ ներգրավված է Էլ Սալվադորում ծովային կրիաների բազմացման, մյուսները՝ Աֆրիկայի հարավում տարրական դպրոցների համար «անձրևորդերի տնտեսության» կառուցման նախագծերում: Ընդհանուր առմամբ HSBC-ի շուրջ 63,250 աշխատակից ամբողջ աշխարհում կամավոր հիմունքներով իրենց մասնակցությունն ունեն կենսաբազմազանության պահպանության մեջ, այդ թվում՝ խոնավ տարածքների խնամք, ոչնչացման եզրին գտնվող կենդանիների և բույսերի տեսակների պաշտպանություն կամ կենսաբազմազանության թեմայով դասընթացների անցկացում դպրոցներում:

Cemex UK

Տնտեսական գործունեության ճյուղ	- շինանյութերի արտադրություն
Չափսեր (2011թ.)	- 54 635 աշխատակից, 15 մլրդ դոլարի դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- Անձնակազմ
Գործընկեր կազմակերպություն	- RSPB
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- աշխատակիցների աջակցությամբ ընկերության հանքահանման տարածքներում կենսաբազմազանության պահպանություն

Cemex-ը շինանյութ արտադրող աշխարհի երրորդ խոշոր ընկերությունն է, որը մասնաճյուղեր ունի ամբողջ աշխարհում: Կենսաբազմազանության պահպանությունը ընկերության կառավարման կարևորագույն սկզբունքներից մեկն է: Cemex-ի աշխատակիցներին թույլատրվում է աշխատանքային ժամերի հաշվին ընկերությանը պատկանող տարածքներում զբաղվել նաև բնապահպանությամբ: 2011թ.-ին ընկերությունը RSPB բնապահպանական ՀԿ-ի հետ միասին սկսեց կենսաբազմազանության պաշտպանությանն ուղղված քարոզարշավ Մեծ Բրիտանիայի

տարբեր մասերում գտնվող, ընկերության սեփականություն հանդիսացող 450 հանքահանման տարածքներում: Ընկերությունը պլանավորում է մինչև 2020թ.-ը հանքահանման տարածքների շուրջ 1000 հա-ը վերածել կենսաբանական տեսակների համար բնակության միջավայրի: Այդ ուղղությամբ կատարված առաջին քայլը կանաչապատման մասնագետների վերապատրաստումն էր, որոնց խնդիրը այդպիսի կենսամիջավայրերի տեղայնացումն է: Այնուհետև ընկերության հանքահանման բոլոր տարածքների ղեկավարների հետ անցկացվեցին դասընթացներ նրանց տարածքներում ու շրջակայքում առկա կենսամիջավայրերի և դրանց պահպանության կարևորության մասին:

2.7 «Գտնվելու վայր և անշարժ գույք»

HeidelbergCement

Տնտեսական գործունեության ճյուղ	-	շինանյութերի արտադրություն
Չափսեր (2012թ.)	-	52 հազ. աշխատակից, 14 020 մլն եվրոյի դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	-	գտնվելու վայր և անշարժ գույք, սպառողների ու շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ
Գործընկեր կազմակերպություն	-	Hassloch բնապահպանական ՀԿ
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	-	հանքահանման տարածքների վերաբնականացում

HeidelbergCement-ը ցեմենտ արտադրող գերմանական ամենախոշոր ընկերությունն է: Այն տարածքները, որտեղից ընկերությունը ձեռք է բերում արտադրության համար անհրաժեշտ հումք՝ քար, ավազ կամ մանրախիճ, հանքահանումից հետո ենթարկվում են վերաբնականացման: Դրանով ընկերությունը մեծապես նպաստում է կենսաբազմազանության պահպանմանը: Ընկերությունը, իրեն պատկանող ցեմենտի գործարաններից մեկը՝ 7 հա տարածքով, հանձնել է Hassloch թռչունների պաշտպանության նորաստեղծ ՀԿ-ին որպես բնապահպանական տարածք օգտագործելու համար: Ներկայումս այն տարածաշրջանում հայտնի բնապահպանական գոտի է, որը գայթակղում է ինչպես տեղացիներին, այնպես էլ տուրիստներին: Տեղանքի երկրաբանական կառուցվածքի և նախկին քարհանքի արտասովոր բնության մասին տեղեկատվություն տարածելու նպատակով կառուցվել են բնական կարուսելներ՝ տեղեկատվական վահանակներով, ստեղծվել է ժամանակակից արվեստի թանգարան:

Flughafen Stuttgart

Տնտեսական գործունեության ճյուղ	-	փոխադրում և լոգիստիկա
Չափսեր (2012թ.)	-	1000 աշխատակից, 230,5 միլիոն եվրո

		դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	-	գտնվելու վայր և անշարժ գույք
Գործընկեր կազմակերպություն	-	Հոհենհայմի համալսարանի մեղվաբուծության պետական ինստիտուտ
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	-	մեղվաբուծություն օդանավակայանի տարածքում, մեղուների համար նպաստավոր պայմանների ստեղծում

Շտուտգարտի օդանավակայանը Գերմանիայի Դաշնության վեցերորդ խոշոր օդանավակայանն է: Այն շահագործվում է Flughafen Stuttgart-ի կողմից: Ընկերությունը վերջերս Հոհենհայմի համալսարանի մեղվաբուծության պետական ինստիտուտի հետազոտությանն է հանձնել օդանավակայանի տարածքում գտնվող մեղուներից ստացված մեղրը որակի գնահատման նպատակով: Հետազոտության դրական արդյունքներից հետո ընկերությունը օդանավակայանի տարածքում ավելացրեց մեղվի փեթակների քանակը: Օդանավակայանի տարածքում տեղակայվեցին ևս չորս մեղվաընտանիքներ: Մեղուների խնամքով զբաղվում է օդանավակայանի այգեպան Ֆրանկ Քնեբելը: Բարձր որակի շնորհիվ մեղրն արժանանում է սպառողների դրական արձագանքին: Մեղվի արտադրությունը խթանելու նպատակով ընկերությունը շարունակաբար բարելավում է իրեն պատկանող 200 հա կանաչ տարածքների բուսածածկույթը, որը նպաստում է նաև տեղանքում կենսաբազմազանության պահպանությանը:

Forest Finance

Տնտեսական գործունեության ճյուղ	-	ֆինանսներ
Չափսեր (2012թ.)	-	15 աշխատակից, 14 020 մլն եվրո պայմանագրի ծավալ (ակտիվի քանակ)
Գործունեության դաշտ	-	գտնվելու վայր և անշարժ գույք
Գործընկեր կազմակերպություն	-	"Biodiversity in Good Company" նախաձեռնություն
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	-	ընկերության գրասենյակի շրջակա տարածքում միջատների բազմացման համար պայմանների ստեղծում

ForestFinance-ը անտառային տնտեսության ոլորտում ներդրումներ կատարելու նպատակով ֆինանսական միջոցներ տրամադրող կազմակերպություն է, որի կառավարման հիմքում ընկած է շահութաբեր տոկոսադրույքներով վարկերի

տրամադրումը սոցիալական և էկոլոգիական կայունության ապահովմանը զուգահեռ: Ընկերությունը մշակում է շուրջ 16,000 հա էկոլոգիական ագրոանտառային և անտառային հողատարածք Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում (Պանամա, Պերու, Կոլումբիա) և Վիետնամում: Իր գործունեության ընթացքում ընկերությունը բազմիցս ստացել է տարբեր մրցանակներ, այդ թվում՝ ֆինանսական ծառայությունների ոլորտի "FSC Global Partner" մրցանակը: Կենսաբազմազանության պահպանությունը ուղղակիորեն խթանելու համար ընկերության աշխատակիցները գրասենյակի շրջակայքում տեղադրել են փեթակներ, որոնք վայրի մեղուների և այլ միջատների համար ծառայում են որպես բներ:

Daimler

Տնտեսական գործունեության ճյուղ	- ավտոմոբիլի արտադրություն
Չափսեր (2012թ.)	- 275 087 աշխատակից, 114 297 մլրդ եվրո դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- գտնվելու վայր և անշարժ գույք
Գործընկեր կազմակերպություն	- NABU
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- ձեռնարկության Զինդելֆինգեր քաղաքի մասնաճյուղի տարածքում բազեների բնակեցում

Daimler-ը աշխարհի խոշորագույն ավտոմոբիլ արտադրող ընկերություններից է: 2001թ-ի սկզբից Զինդելֆինգեր քաղաքում տեղակայված ընկերության ամենախոշոր շուրջ 40,000 աշխատակից ունեցող մասնաճյուղի ռազմավարական քաղաքականության հիմքում ընկած է կենսաբազմազանության պահպանությունը: Աղավնիների քանակի անընդհատ աճը ընկերության տարածքում բնական ճանապարհով կրճատելու շուրջ մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով ընկերությունը դիմել է NABU-ի Մյոսինգեն քաղաքում գտնվող թռչունների պաշտպանության կենտրոնին: NABU-ի խորհրդով ընկերությունը իրեն պատկանող շինությունների ծխնելույզների մոտ տեղադրեց սապսանի (Falco peregrinus) բներ: Գիշատիչ այդ թռչունը, սնվելով աղավնիներով, նպաստում է աղավնիների թվի բնական ճանապարհով կրճատմանը: NABU-ի աջակցությամբ սապսանի 200 բներ տեղադրվեցին ընկերության տարածքում: Բացի այդ, աշխատակիցների հետ անցկացվեցին ուսուցողական աշխատանքներ: Սապսանի բների տեղադրմանը հաջորդեց վայրի մեղուների փեթակների, ինչպես նաև չղջիկների ու քաղաքային ծիծեռնակների (Delichon urbicum) բների տեղադրումը: 2002թ.-ից ի վեր Զինդելֆինգեր քաղաքում իրականացվում է տեղանքին բնորոշ թռչունների և չղջիկների բների մոնիտորինգ: Ընկերության աշխատակիցներին և հասարակությանը տարածքի կենսաբազմազանության հետ ծանոթացնելու համար տեղադրվել են տեղեկատվական վահանակներ և կազմակերպվում են տարբեր միջոցառումներ:

British Land

Տնտեսական գործունեության ճյուղ	- անշարժ գույք և ներդրումներ
Չափսեր (2011թ.)	- 800 աշխատակից, 332 մլն ֆունտ ստեռլինգ դրամաշրջանառություն
Գործունեության դաշտ	- գտնվելու վայր և անշարժ գույք
Գործընկեր կազմակերպություն	- անկախ կենսաբաններ
Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գործունեություն	- ընկերությանը պատկանող շինությունների տանիքների կանաչապատում

British Land-ը Մեծ Բրիտանիայի խոշորագույն անշարժ գույքի գործակալություն է: 2005թ.-ից սկսած այն կենսաբազմազանության պահպանությունը դարձրել է իր գործարար ռազմավարության կարևոր կետերից մեկը: Ընկերությունը կենսաբազմազանության պահպանությանն աջակցում է քաղաքներում իրեն պատկանող շինությունների կտուրներին կենդանիների ու բույսերի տեսակների համար կենսամիջավայրերի ստեղծման ճանապարհով: Արդյունքում, Լոնդոնի և բրիտանական մի շարք այլ խոշոր քաղաքների որոշ շինությունների կտուրներ կանաչապատված են: Ստեղծված կանաչ տարածքները կենսամիջավայր են հանդիսանում հիմնականում տեղական տեսակի կենդանիների ու բույսերի, թռչունների ու միջատների համար: 2010թ.-ին British Land-ը հովանավորել է "Beyond the Hive" լավագույն կանաչապատված կտուրների ճարտարապետության մրցույթ-միջոցառումը: